Մրցույթ՝ ԿԳՄՍՆ ենթակայության Վայոց Ձոր մարզի «Ջերմուկի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (23 դասաժամ), աշխարհագրության (17 դասաժամ), հայոց լեզվի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-Դիմում, մեկ լուսանկար 3x4 չափի,

- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

- Անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/

- Ինքնակենսագրություն,

- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է փաստաթղթերի պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 26-ին՝ ժամը 14:00-ին, «Ջերմուկի կրթահամալիր»-ում: Հասցեն՝ Վայոց ձորի մարզ, ք. Ջերմուկ, Ձախափնյակ 4/16:

Տեղեկությունների համար զանգահարել՝ / 077897073/ հեռախոսահամարներով: